

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ԼՐԱՑՈՒՄ



«Ջանգեգուրի պղնձա-մոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ
Թողարկողի ֆիրմային անվանումը

փակ բաժնետիրական ընկերություն
Կազմակերպա-իրավական ձևը

ՀՀ, Սյունիքի մարզ, 3309, ք. Քաջարան, Լեռնագործների 18
Հեռ.՝ (+374 285) 3 31 31, (+374 60) 500 003
Էլ.-փոստ՝ info@zcmc.am
Կայք՝ www.zcmc.am

«Ամերիաբանկ» ՓԲԸ
Գլխավոր տեղաբաշխողի անվանումը

փակ բաժնետիրական ընկերություն
Կազմակերպա-իրավական ձևը

ՀՀ, ք. Երևան 0010, Վ. Սարգսյան 2
Հեռ.՝ (+37410) 56 11 11, Ֆաքս՝ (+37410) 51 31 33
Էլ.-փոստ՝ info@ameriabank.am
Կայք՝ www.ameriabank.am

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ:

Արժեթղթերի տեսակը՝	անվանական, արժեկտրոնային պարտատոմս
Արժեթղթերի ձևը՝	ոչ փաստաթղթային
Արժեթղթերի քանակը՝	համապատասխան Թողարկման ծավալի ու անվանական արժեքի
Արժեթղթերի անվանական արժեքը՝	100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար, 100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ Արտարժույթային պարտատոմսերի դեպքում՝ առավելագույնը 50,000,000 (հիսուն միլիոն) ԱՄՆ դոլար
Արժեթղթերի թողարկման ծավալը՝	Դրամային պարտատոմսերի դեպքում՝ առավելագույնը 2,500,000,000 (երկու միլիարդ հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ, բայց ոչ պակաս, քան մինչև դրամային պարտատոմսերի տեղաբաշխման պահը Թողարկողի կողմից նախկինում տեղաբաշխված և շրջանառության մեջ գտնվող արտարժույթային պարտատոմսերի ընդհանուր անվանական ծավալի 10% (տասը) տոկոսը
Արժեկտրոնը՝	Ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
Շրջանառության ժամկետը՝	Ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ	3
ՄԱՍ 1 ԱՄՓՈՓԱԹԵՐԹ	4
1.1 Տեղեկատվություն թողարկողի և նրա գործունեության վերաբերյալ	4
1.2 Թողարկողին և պարտատոմսերին առնչվող ռիսկերը	8
1.3 Թողարկողի տնտեսական գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները	10
1.4 Թողարկողի աուդիտն իրականացնող անձի և խորհրդատուների ինքնության մասին տեղեկություններ	11
1.5 Թողարկողի կառավարման մարմնի անդամները, աշխատակիցները և խոշոր բաժնետերերը	11
1.6 Առաջարկվող արժեթղթերի հիմնական վիճակագրական տվյալները	12
1.7 Արժեթղթերի առաջարկի համակողմանի նկարագիրը	13
1.8 Վերջնական պայմանների հրապարակման ձևը	13
1.9 Ամփոփ ֆինանսական տվյալներ	13
ՄԱՍ 2 ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ	41
2.6 Լրացուցիչ տեղեկատվություն	41
ՄԱՍ 3 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	116
3.1 ՀԱՎԵԼՎԱԾ 6: Ֆինանսական հաշվետվություններ	116

ՄԱՍ 1ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ԾԱՆՈՒՑՈՒՄ ՆԵՐԴՐՈՂԻՆ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԸ ՊԵՏՔ Է ԴԻՏՎԻ ՈՐՊԵՍ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄ ԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԴՐՈՂԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՊԵՏՔ Է ՀԻՄՆՎԱԾ ԼԻՆԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ՎՐԱ:

Ամփոփաթերթի կազմման համար պատասխանատու անձինք ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու համար (այդ թվում՝ թարգմանությանը վերաբերող մասով) կրում են քաղաքացիական պատասխանատվություն, եթե այն ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ է Ծրագրային Ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում:

Ներդրողը կարող է ձեռք բերել Ծրագրային Ազդագիրը և վերջինիս կից ներկայացվող փաստաթղթերն էլեկտրոնային տարբերակով www.zcmc.am և www.ameribank.am կայքերից:

1.1 Տեղեկատվություն թողարկողի և նրա գործունեության վերաբերյալ

1.1.1 Թողարկողի տվյալները և կապի միջոցները

Թողարկողի լրիվ ֆիրմային անվանումն է

Հայերեն՝ «Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերություն

Ռուսերեն՝ Закрытое Акционерное общество “Зангезурский Медно-Молибденовый Комбинат”

Անգլերեն՝ “Zangezur Copper Molybdenum Combine» Closed Joint Stock Company

Թողարկողի կրճատ ֆիրմային անվանումն է

Հայերեն՝ «ՀՊՄԿ» ՓԲԸ

Ռուսերեն՝ ЗАО “ЗММК”

Անգլերեն՝ ZCMC CJSC

Թողարկողի պետական գրանցման վայրն է՝

ՀՀ, Սյունիքի մարզ, 3309, ք. Քաջարան, Լեռնագործների 18

Թողարկողի պետական գրանցման համարն է՝

27.140.00009

Թողարկողի գործունեության վայրն է

ՀՀ, Սյունիքի մարզ, 3309, ք. Քաջարան, Լեռնագործների 18

Կապի միջոցները՝

Հեռ.՝ (+374 285) 3 31 31

(+374 60) 500 003

Էլ. փոստ՝ info@zcmc.am

Կայք՝ www.zcmc.am

Թողարկողին առնչվող հարցերի առաջացման դեպքում կարելի է դիմել «ԶՊՄԿ» ՓԲԸ՝ Աննա Սեդրակյանին, Արմինե Ստեփանյանին կամ Սուրեն Մելիքյանին (էլ. փոստ՝ info@zcmc.am, հեռ.՝ (+374 60) 500 003):

1.1.2 Թողարկողի համառոտ պատմությունը և ռազմավարությունը

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ ԶՊՄԿ, Թողարկող կամ Ընկերություն) Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) առաջատար հանքարդյունահանող ընկերությունն է: Ընկերությունը շահագործում է մոլիբդենի և պղնձի հաստատված զգալի պաշարներով Քաջարանի հանքավայրը (այսուհետ՝ Հանք կամ Հանքավայր):

Առաջին երկրաբանական հետազոտությունները Քաջարանում կատարվել են 1880-ական թվականներին և շարունակվել մինչև 1931 թվականը, երբ սկսվել է տարածքում լայնածավալ հորատման ծրագրերի իրականացումը:

Հանքավայրի շահագործումն սկսվել է 1951թ. և մինչև 1954թ. հանքարդյունահանումն իրականացվել է ստորգետնյա եղանակով, 1954թ.-ից մինչև 1962թ.՝ համակցված եղանակով (ստորգետնյա և բացահանք), իսկ 1962թ.-ից Հանքավայրի շահագործումն իրականացվում է միայն բաց եղանակով:

Ետխորհրդային շրջանում ընկերությունը ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարության 09.12.1997թ. N262 հրամանով վերակազմակերպվել է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» պետական ձեռնարկության (հիմնադրվել է 1952թ.-ին) վերագրանցման միջոցով, իսկ 2005թ. հունվարի 1-ին սեփականաշնորհվել է՝ համաձայն ՀՀ կառավարության 2004թ. դեկտեմբերի 9-ի թիվ 1677-Ա որոշման:

2005թ-ին «Քրոնիմետ Մայնինգ» Էյ-Ջի կողմից ԶՊՄԿ-ի բաժնետոմսերի 60%-ի ձեռքբերմամբ Ընկերությունը մուտք գործեց զարգացման նոր շրջան՝ իր առաջ դնելով ռազմավարական զարգացման նոր խնդիրներ՝ կայանալ որպես մասնավոր ընկերություն, արդիականացնել և բարձրացնել արտադրողականությունը միջազգային լավագույն փորձի կիրառմամբ:

2007թ-ին արված գնահատականի համաձայն՝ Հանքավայրի ռեսուրսների ընդհանուր ծավալը գնահատվել է 2,244 մլն տոննա հանքաքար: Ըստ 2015թ.-ի Golder Associates ընկերության կողմից պատրաստված՝ NI 43-101 ստանդարտին (National Instrument 43-101) համապատասխան հանքային ռեսուրսների գնահատման NI 43-101 հաշվետվության՝ Քաջարանի հանքավայրում առկա է 1,933 մլն տոննայի հանքաքար:

Հանքավայրի հաստատված պաշարները ավելի քան բավարար են գործող լիցենզիայի ընթացքում օգտագործելու համար: Գործող լիցենզիան թույլ է տալիս Ընկերությանը մինչև 2041թ. արդյունահանել և վերամշակել տարեկան 22մլն տոննա հանքաքար:

2005 - 2018թթ. ընթացքում Ընկերության կողմից իրականացվել են ավելի քան 500 մլն ԱՄՆ դոլարի ներդրումներ, որոնք ուղղվել են արդյունահանող ու վերամշակող հզորությունների արդիականացմանը և ավելացմանը, ինչի արդյունքում արտադրողականության ծավալներն աճել են՝ 8.8 մլն տոննայից հասնելով 20 մլն տոննայի: Ընկերությունը նպատակ ունի 2019թ.-ի արտադրողականությունը հասցնել 22 մլն տոննայի՝ ի հաշիվ վերջին ֆինանսական տարվա ընթացքում արված կապիտալ ներդրումների:

Ընկերության կողմից պլանավորվող հեռանկարային նախաձեռնությունները ներառում են.

- հանքավայրի շահագործման լրիվ ժամանակահատվածի պլանավորման նպատակով հետախուզական աշխատանքների արդյունքների ամփոփում, ստացված երկրաբանական տեղեկատվության հիման վրա,
- նոր պոչամբարի նախագծում, կառուցում ու շահագործում,
- հանքարդյունահանման ենթակառուցվածքների կատարելագործում,
- այլ նախագծերի իրականացում՝ ուղղված արտադրողականության, արդյունավետության բարձրացմանը և ծախսերի նվազեցմանը,
- SARD համակարգի ներդրման համար կապիտալ ծախսերի իրականացում (տես [Ազդագրի 3.3.3](#) մասը),
- պոչանքի պարզվածքի որակի բարելավմանն ուղղված նոր ներդրումային ծրագրի իրականացում (տես [Ազդագրի 3.3.3](#) մասը):

1.1.3 Թողարկողի կանոնադրական կապիտալը և դրա կառուցվածքը

Ընկերության կանոնադրական կապիտալն առ 31.12.2018թ կազմել է 54,966,680,000 ՀՀ դրամ, որը բաժանված է 2,748,334 հատ տեղաբաշխված սովորական անվանական բաժնետոմսերի, յուրաքանչյուրը 20,000 ՀՀ դրամ անվանական արժեքով: Թողարկողի բաժնետերերի ցանկը (ներառյալ բաժնեմասնակցության չափերը) ներկայացված է սույն Ծրագրային Ազդագրի 3.5.2 գլխում:

1.1.4 Թողարկողի բիզնեսի նկարագիրը

Ընկերությունն արտադրում է պղնձի և մոլիբդենի խտանյութ: Հանքավայրն իր պղնձի և մոլիբդենի պաշարներով Հարավային Կովկասում խոշորագույնն է:

Ընկերության կողմից արդյունահանված հանքաքարի վերամշակումից ՁՊՄԿ-ում արտադրվում է մոլիբդենի և պղնձի խտանյութ: Արտադրված պղնձի խտանյութն արտահանվում է, իսկ մոլիբդենի խտանյութը վերամշակվում է «Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ-ի և «ԱՄՓ Հոլդինգ» ՍՊԸ-ի կողմից: Մոլիբդենի խտանյութի վերամշակման արդյունքում ստացվում է ֆերոմոլիբդեն, որը հետագայում արտահանվում է Ընկերության կողմից:


Ընկերության հասույթի հիմնական մասը ձևավորվում է պղնձի խտանյութի և ֆերոմոլիբդենի իրացումից, որոնց մասնաբաժինն ընդհանուր հասույթում 2019թ.-ի առաջին կիսամյակում

կազմել է համապատասխանաբար 66% և 34%, իսկ 2018թ.-ին՝ 69% և 30% (2017թ.՝ 77.5% և 21.1%): 2019թ.-ի առաջին կիսամյակում Ընկերության կողմից իրացվել է 129,136 չոր մետրիկ տոննա պղնձի խտանյութ և 4,411 տոննա ֆերոմոլիբդեն, իսկ 2018թ.-ին՝ 242,871 չոր մետրիկ տոննա պղնձի խտանյութ և 6,980 տոննա ֆերոմոլիբդեն (2017թ.-ին՝ համապատասխանաբար 260,646 և 6,520):

1.1.5 Թողարկողի կազմակերպչական կառուցվածքը

Թողարկողի կազմակերպչական կառուցվածքը ներկայացված է [Հավելված 4-ում](#):

1.1.6 Թողարկողի խմբի կառուցվածքը



* Յուրաքանչյուրը տիրապետում է «Քրոնիմետ Հոլդինգ» ՍՊԸ-ի բաժնեմասերի 6.5 տոկոսին
 ** Յուրաքանչյուրը տիրապետում է «Քրոնիմետ Վերվալտունգս» ՍՊԸ-ի բաժնեմասերի 33.3 տոկոսին

1.1.7 Ակտիվների որակը

2019թ.-ի հունիսի 30-ի դրությամբ Թողարկողի ընդհանուր ակտիվների մեծությունը, կազմել է 313 մլրդ ՀՀ դրամ: Նույն պահի դրությամբ կապիտալի համարժեքության գործակիցը (ընդհանուր կապիտալի հարաբերությունն ընդհանուր ակտիվներին) կազմել է 36%, որը համահունչ է ոլորտի միջին ցուցանիշին:

1.2 Թողարկողին և պարտատոմսերին առնչվող ռիսկերը

1.2.1 Թողարկողին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

Շուկայական ռիսկ (արտադրանքի գներ): Թողարկողի ֆինանսական ցուցանիշների վրա զգալիորեն ազդում են արդյունահանվող մետաղների (պղինձ և մոլիբդեն) միջազգային շուկայական գների տատանումները: Պատմականորեն այս գներն ունեցել են տատանման լայն տիրույթ, որը պայմանավորված է Թողարկողի վերահսկողությունից դուրս բազմաթիվ գործոններով:

Շրջակա միջավայր, թափոններ, առողջություն, անվտանգություն: Բնապահպանական, թափոնների, առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված կանոնակարգերի և օրենսդրական դաշտի խստացումը կարող է ավելացնել Թողարկողի գործառնական և կապիտալ ծախսերը, սահմանափակել գործողությունները:

Իրացման շուկաների մատչելիության ռիսկ: Թողարկողի արտադրանքը սպառողներին հասցնելու համար էական կարևորություն ունեն միջազգային և տարածաշրջանային տրանսպորտային համակարգերի, դրանց սպասարկող ենթակառուցվածքների և սուբյեկտների անխափան և արդյունավետ աշխատանքը:

Ներդրումային կապիտալի մատչելիության ռիսկ: Թողարկողը գործում է հանքարդյունաբերության ոլորտում, որը կապիտալ ներդրումների առումով տնտեսության ամենահինտենսիվ ճյուղերից մեկն է և պահանջում է շարունակական խոշոր կապիտալ ներդրումներ:

Պաշարների գնահատման ռիսկեր: Թողարկողը գործում է հանքարդյունաբերության ոլորտում, որտեղ գործող ցանկացած ընկերության մոտ առկա է պաշարների ճշգրիտ գնահատման ռիսկ: Թողարկողի գնահատմամբ Հանքավայրի պաշարների գնահատման ճշգրտության աստիճանը բավականին բարձր է և հուսալի՝ հաշվի առնելով Հանքավայրի շահագործման պատմությունը և Թողարկողի կողմից կատարված երկրաբանական աշխատանքների ծավալը:

Էներգակիրների գներ: Թողարկողի գործողությունների համար պահանջվում է վառելիքի, էլեկտրաէներգիայի և այլ ռեսուրսների զգալի ծավալ: Թողարկողն էներգակիրների մատակարարման գործընթացում կախվածության մեջ է այդ էներգակիրները մատակարարող երրորդ կողմ հանդիսացող անձանցից:

Հարկային դաշտի և ռոյալթիի փոփոխություն: Հանքարդյունաբերության մեջ ներգրավված ընկերությունների համար ռոյալթին էական ծախսային հոդված է: ԶՊՄԿ-ի և Wood Mackenzie խորհրդատվական ընկերության տարբեր երկրների հանքարդյունաբերության ոլորտին առնչվող հարկային կարգավորումների համեմատական ուսումնասիրության արդյունքում ռոյալթիի արդյունավետ դրույքի տեսանկյունից ՀՀ-ն կարելի է համարել ամենաբարձր դրույքով օրենսդրական դաշտերից մեկը:

Համայնքային հարաբերություններ: Թողարկողը կարողացել է հաջողությամբ կառավարել իր հարաբերությունները համայնքային մարմինների հետ, սակայն Թողարկողը չի կարող հավաստիացնել, որ ապագայում համայնքային ծախսերը կմնան անփոփոխ կամ չեն աճի:

Արտարժույթային ռիսկ: Թողարկողի հասույթի գրեթե 100%-ն արտահայտված է ԱՄՆ դոլարով, իսկ գործառնական ծախսերը, մասնավորապես՝ դրանց խոշոր բաղադրիչ հանդիսացող աշխատավարձային պարտավորությունները և էլեկտրաէներգիայի ծախսերը արտահայտված են ՀՀ դրամով: Արդյունքում Թողարկողի պարագայում արտարժույթային ռիսկն առկա է միայն այն դեպքում, երբ տեղի է ունենում ՀՀ դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի արժեզրկում (փոխարժեքի իջեցում): Նման միտում ՀՀ-ում վերջին տարիներին չի նկատվել:

Տեխնոլոգիական պրոցեսներ: Սարքավորումների շարքից դուրս գալը, աշխատանքային խափանումները, տեխնոլոգիական ցանկացած էական վթար կարող է առաջացնել արտադրության գործընթացի տևական դադար, արտադրանքի ծավալի կրճատում, և արդյունքում բացասաբար անդրադառնալ Թողարկողի վաճառքի և շահութաբերության վրա:

1.2.2 Պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

Տոկոսադրույքի ռիսկ: Շուկայում պարտատոմսերի գները գտնվում են հակադարձ կախվածության մեջ տոկոսադրույքների մակարդակից, այսինքն՝ տոկոսադրույքների բարձրացումը, այլ հավասար պայմաններում, հանգեցնում է պարտատոմսերի գնի անկմանը և հակառակը:

Շուկայական ռիսկ: Երկրորդային շուկայում Թողարկողի պարտատոմսերի գինը և դրանց նկատմամբ պահանջարկը կարող են նվազել ներքին/միջազգային տնտեսություններում տնտեսական ընթացիկ ցուցանիշների և դրանց փոփոխությունների սպասումների հետ կապված: Ներդրողը պետք է հաշվի առնի, որ արժեթղթերի գները շուկայում կարող են ժամանակի ընթացքում իջնել կամ բարձրանալ:

Վերաներդրման ռիսկ: Վերաներդրման ռիսկը պայմանավորված է Թողարկողի պարտատոմսերից պարբերաբար ստացվող արժեկտրոնային եկամուտների առնվազն համարժեք եկամտաբերությամբ (ձեռքբերման գործարքով սահմանված մինչև մարումը եկամտաբերությամբ) ներդրում կատարելու հնարավորության բացակայությամբ:

Վարկային/դեֆոլտի ռիսկ: Ներդրողները Թողարկողի պարտատոմսեր ձեռք բերելիս իրենց վրա են վերցնում Թողարկողի վարկային ռիսկը, որը կապված է ապագայում Թողարկողի ֆինանսական վիճակի հնարավոր վատթարացման, արժեկտրոնային վճարումներ իրականացնելու կամ պարտատոմսերն իրենց անվանական արժեքով մարման անհնարինության և հավանական սնանկացման հետ:

Արտարժույթային ռիսկ: Արտարժույթային ռիսկն առկա է այն ներդրողների մոտ, ովքեր, իրենց դրամական միջոցները, ԱՄՆ դոլարով կամ ՀՀ դրամով պարտատոմսերում ներդնելու նպատակով, պետք է փոխարկեն մի արժույթից մեկ այլ արժույթի:

Իրացվելիության ռիսկ: Թողարկողը չի կարող երաշխավորել, որ պարտատոմսերի շրջանառության ողջ ժամկետի ընթացքում ներդրողները ցանկացած պահի կարող են իրացնել կամ ձեռք բերել պարտատոմսերը երկրորդային շուկայում (կարգավորվող շուկայում) իրենց համար տնտեսապես շահավետ գնով:

Գնաճի կամ գնողունակության ռիսկ: ՀՀ-ում գնաճի առկայության պարագայում, Թողարկողի կողմից իր պարտատոմսերի դիմաց առաջարկվող անվանական արժեկտրոնային եկամտաբերությունը գնահատելիս ներդրողները պետք է հաշվի առնեն, որ իրական եկամտաբերությունը կարող է լինել անվանական արժեկտրոնային եկամտաբերությունից ավելի ցածր (գնաճի չափով):

1.3 Թողարկողի տնտեսական գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնելու նպատակով ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության հետ կնքել է օգտակար հանաձոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման ՊՎ-232 լիցենզիայի պայմանագիր, որը վերջին անգամ փոփոխվել և լրացվել է 2016թ.-ի դեկտեմբերին: Լիցենզիայի պայմանագրի համաձայն՝ Թողարկողը կարող է Հանքավայրը շահագործել մինչև 2041թ.:

Իր բնականոն գործունեության նպատակով Ընկերությունը ստացել է հետևյալ հիմնական լիցենզիաները/թույլտվությունները.

1	Օգտակար հանաձոյի արդյունահանման թույլտվություն N ՇԱԹՎ-29/232 /նախկին 14/179/	Տրված է է 27.11.2012թ.-ին և գործում է մինչև 30.05.2041
2	Պայթուցիկ նյութերի, պայթեցման սարքավորումների առևտրի և պայթեցման աշխատանքների կատարման N ՊՆՊՍԱՊԱ	Տրված է 20.09.2011թ.-ին և գործում է անժամկետ.
3	Պայթուցիկ նյութերի կամ պայթեցման սարքավորումների արտադրության լիցենզիա N 17	Տրված է 14.06.2004թ.-ին և գործում է անժամկետ
4	Արտանետման թույլտվություն՝ գրանցման համարը՝ 000125	Տրված է 12.10.2017թ.-ին և գործում է անժամկետ.
5	Ջրօգտագործման թույլտվություն N 000116	Տրված է 01.07.2016թ.-ին և գործում է մինչև 01.07.2021 թ.
6	Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացման լիցենզիա N 13731	Տրված է 08.02.2010թ.-ին և գործում է անժամկետ

Խորհուրդը գտնում է, որ վերոնշյալ, ինչպես նաև Ընկերության կողմից ստացված այլ լիցենզիաների/թույլտվությունների շրջանակներում Ընկերությունը կարող է անխափան կերպով իրականացնել արտադրության ողջ գործընթացը:

Ընկերության գործունեությունը գտնվում է Թողարկողի կառավարման մարմինների վերահսկողության ներքո, որոնք մշտապես փնտրում են արդյունավետության բարձրացման հնարավորություններ:

1.4 Թողարկողի աուդիտն իրականացնող անձի և խորհրդատուների ինքնության մասին տեղեկություններ

Թողարկողի 2017 և 2018 թթ. ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրել է «Էրնսթ Ընդ Յանգ» ՓԲԸ-ը՝

ՀՀ ք. Երևան 0001, Հյուսիսային պողոտա, 1 շենք, գրասենյակ 27
 հեռ.՝ (+37410) 50 07 90
 ֆաքս՝ + 374 (10) 50 07 06
 կայք՝ www.ey.com/am

1.5 Թողարկողի կառավարման մարմնի անդամները, աշխատակիցները և խոշոր բաժնետերերը

Թողարկողի կառավարման մարմիններն են՝ բաժնետերերի ընդհանուր ժողովը (այսուհետ Ընդհանուր Ժողով), Խորհուրդը և գործադիր մարմինը՝ Գլխավոր տնօրենը:

Թողարկողի բաժնետերերն են՝

Բաժնետեր	Բաժնեչափ ('000 ՀՀ դրամ)	Բաժնեչափ (%)
«Քրոնիմետ մայնինգ» Էյ-Ջի	32,980,008	60.000095
«Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ	8,245,002	14.999996
«ԱՄՓ Հոլդինգ» ՍՊԸ	6,870,835	12.500009
«Ջանգեզուր Մայնինգ» ՍՊԸ	6,870,835	12.4999

Թողարկողի Խորհուրդը կազմված է 5 անդամներից.

Անունը, ազգանունը	Պաշտոնը	Փորձառությունը ոլորտում
Թոմաս Հայլ	Խորհրդի նախագահ	15 տարի
Նարեկ Ամբարյան	Խորհրդի անդամ, Գլխավոր տնօրենի առաջին տեղակալ	7 տարի
Վահե Հակոբյան	Խորհրդի անդամ	7 տարի
Մորից Հիլ	Խորհրդի անդամ	10 տարի
Յոհաննես Բիատ	Խորհրդի անդամ	9 տարի

Թողարկողի գործադիր մարմնի կառուցվածքը՝

Անունը, ազգանունը	Պաշտոնը	Փորձառությունը ոլորտում
Մհեր Պողոսյով	Գլխավոր տնօրեն	15 տարի

Թողարկողի աշխատակիցների ընդհանուր թիվն առ 31.12.2018թ. կազմել է 4,435:

1.6 Առաջարկվող արժեթղթերի հիմնական վիճակագրական տվյալները

Թողարկվող պարտատոմսերն անվանական են և ոչ փաստաթղթային, անբաժանելի են և փոխարկելի չեն:

Թողարկվող պարտատոմսերի դիմաց տոկոսային վճարումները կատարվելու են արժեկտրոնների տեսքով:

ԱՄՆ դոլարով թողարկվող պարտատոմսերը տեղաբաշխվում, շրջանառվում և մարվում են ԱՄՆ դոլարով, իսկ ՀՀ դրամով թողարկվող պարտատոմսերը՝ ՀՀ դրամով: Պարտատոմսերի սեփականատերերին արժեկտրոնային վճարումները կատարվում են ՀՀ դրամով: ԱՄՆ դոլարով թողարկված պարտատոմսերի դիմաց արժեկտրոնների վճարման համար հիմք է ընդունվում արժեկտրոնների վճարման օրվան նախորդող աշխատանքային օրվա համար ՀՀ ԿԲ կողմից համապատասխանաբար ԱՄՆ դոլարի նկատմամբ հրապարակված միջին փոխարժեքը:

Դոլարային պարտատոմսերի թողարկման դեպքում թողարկման (առաջարկի) ընդհանուր ծավալը կազմում է առավելագույնը 50,000,000 (հիսուն միլիոն) ԱՄՆ դոլար, իսկ դրամային պարտատոմսերի դեպքում՝ առավելագույնը 2,500,000,000 (երկու միլիարդ հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ, բայց ոչ պակաս քան մինչև դրամային պարտատոմսերի տեղաբաշխման պահը Թողարկողի կողմից տեղաբաշխված և շրջանառության մեջ գտնվող արտարժույթային պարտատոմսերի ընդհանուր անվանական ծավալի 10% (տասը տոկոսը): Վերջինիս դրամային մեծությունը որոշվում է՝ հիմք ընդունելով մեկ ԱՄՆ դոլարի նկատմամբ 480 ՀՀ դրամ փոխարժեքը:

Տեղաբաշխվող (վաճառվող) պարտատոմսերի քանակը որոշվելու է Թողարկման ծավալին ու անվանական արժեքին համապատասխան:

Մեկ պարտատոմսի անվանական արժեքը կազմում է 100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ ՀՀ դրամով թողարկված պարտատոմսերի համար, 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար՝ ԱՄՆ դոլարով թողարկված պարտատոմսերի:

Պարտատոմսերի մարման օրը ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Պարտատոմսերի դիմաց նախատեսվող արժեկտրոնային եկամուտների վճարման պարբերականությունը ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Տարեկան արժեկտրոնի մեծությունը մինչև հարկերը վճարելը ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Տեղաբաշխման արդյունքում ներգրավված միջոցները Թողարկողն ուղղելու է առկա պարտավորությունների վերաֆինանսավորմանը, կապիտալ ներդրումների ծրագրերի իրականացմանը (ներկայացված են սույն [Ազդագրի 3.3.3](#) գլխում) և կապիտալի ֆինանսավորման գործող կառուցվածքի բարելավմանը:

1.7 Արժեթղթերի առաջարկի համակողմանի նկարագիրը

Պարտատոմսերի տեղաբաշխումն սկսելու և ավարտելու օրը ենթակա են որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Պարտատոմսերի ձեռքբերման գործընթացի մանրամասները և վաճառքի պայմանները ենթակա են հաստատման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

1.8 Վերջնական պայմանների հրապարակման ձևը

Պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության ու մարման վերջնական պայմանները ենթակա են որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման վերջնական պայմանները Թողարկողը պարտավորվում է հրապարակել առնվազն իր ինտերնետային կայքում:

1.9 Ամփոփ ֆինանսական տվյալներ

1.9.1 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

հազ. դրամ

Ցուցանիշի անվանումը	2019թ. I կիսամյակ (Աուդիտ չանցած)	2018թ. (Աուդիտ անցած)	2017թ. (Աուդիտ անցած)
---------------------	-----------------------------------	-----------------------	-----------------------

Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ	104,500,007	199,900,935	188,553,245
Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք	(56,134,102)	(103,087,295)	(98,836,312)
Համախառն շահույթ (վնաս)	48,365,905	96,813,640	89,716,933
Իրացման ծախսեր	(5,197,888)	(10,252,977)	(10,298,126)
Վարչական ծախսեր	(7,736,534)	(14,339,312)	(12,663,416)
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս)	35,431,483	72,221,351	66,755,391
Գործառնական այլ եկամուտներ	534,537	1,333,215	556,122
Ռոյալթիի գծով ծախս	(12,000,000)	(20,666,081)	(17,842,943)
Սոցիալական հատկացումներ	(3,049,576)	(7,900,100)	(3,481,634)
Գործառնական այլ ծախսեր	(5,290,386)	(11,687,791)	(6,528,755)
Գործառնական շահույթ (վնաս)	15,626,058	33,300,594	39,458,181
Ֆինանսական ծախսեր	(4,343,822)	(8,863,738)	(23,344,400)
Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս)	1,544,665	(394,771)	-
Սովորական գործունեությունից շահույթ (վնաս)	12,826,901	24,272,085	16,109,919
Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը	12,826,901	24,272,085	16,109,919
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	(6,000,000)	(8,733,843)	(5,264,349)
Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	6,826,901	15,538,242	10,845,570

1.9.2 ԱՄՓՈՓ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ

հազ. դրամ

Ցուցանիշի անվանումը	2019թ. I կիսամյակ (Աուդիտ չանցած)	2018թ. (Աուդիտ անցած)	2017թ. (Աուդիտ անցած)
Հիմնական միջոցներ	156,332,398	150,414,550	144,110,339
Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ	60,335,198	58,669,882	50,183,365
Ոչ նյութական ակտիվներ	398,518	408,203	99,040
Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	9,909,657	6,450,472	928,484
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	27,038,576	20,908,860	18,241,757
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	254,014,347	236,851,967	213,562,985
Պաշարներ	25,192,697	20,431,684	13,151,871
Տրված ընթացիկ կանխավճարներ	7,578,532	6,805,004	8,150,173
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	8,452,229	9,600,820	13,579,858
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	674,684	525,227	5,678,570
Այլ ընթացիկ ակտիվներ	17,013,911	7,912,099	2,584,127
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	58,912,053	45,274,834	43,144,599
Ընդամենը ակտիվներ	312,926,401	282,126,801	256,707,584
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար	54,966,680	54,966,680	54,966,680
Կուտակված շահույթ	57,842,979	51,016,078	36,511,813
Ընդամենը սեփական կապիտալ	112,809,659	105,982,758	91,478,493
Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	25,276,975	23,757,102	49,306,949
Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ	95,137,860	57,510,431	43,683,356
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	120,414,835	81,267,533	92,990,305
Կարճաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	31,905,411	43,591,519	22,831,584
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	28,789,337	22,563,854	14,887,920
Ստացված ընթացիկ կանխավճարներ	9,485,297	22,809,090	13,785,285
Այլ կրեդիտորական պարտքեր	3,196,700	4,577,997	13,039,545
Այլ ընթացիկ պարտավորություններ	6,325,162	1,334,050	7,694,352
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	79,701,907	94,876,510	72,238,686
Ընդամենը պարտավորություններ	200,116,742	176,144,043	165,228,991
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	312,926,401	282,126,801	256,707,484

1.9.3 ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՄՓՈՓ ՏՎՅԱԼՆԵՐ

հազ.դրամ

Ցուցանիշի անվանումը	2019թ. I կիսամյակ (Աուդիտ չանցած)	2018թ. (Աուդիտ անցած)	2017թ. (Աուդիտ անցած)
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբին	525,227	5,678,570	4,791,358
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(8,895,294)	24,025,191	46,552,965
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(11,066,356)	(19,283,712)	(15,695,246)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	20,393,823	(9,318,524)	(30,007,648)
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	674,684	525,227	5,678,570

1.9.4 ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ

Ցուցանիշի անվանումը	2019թ. I կիսամյակ (Աուդիտ չանցած)	2018թ. (Աուդիտ անցած)	2017թ. (Աուդիտ անցած)
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)*	4,968 դրամ	5,654 դրամ	3,946 դրամ
Սեփական կապիտալի շահույթաբերություն (ROE)*	12.5%	15.7%	12.6%
Ակտիվների շահույթաբերություն (ROA)*	4.6%	5.8%	4.5%
Զուտ շահույթի մարժա (NPM)	6.5%	7.8%	5.8%
Կապիտալի համարժեքության գործակից	0.36	0.38	0.36
Ֆինանսական կախվածության գործակից	1.77	1.66	1.81
Բացարձակ իրացվելիության գործակից	0.01	0.01	0.08
Ընթացիկ իրացվելիության գործակից	0.21	0.18	0.38
Ընդհանուր իրացվելիության գործակից	0.74	0.48	0.60
Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից*	23.2	17.2	23.9
Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	15.8	21.2	15.3
Պաշարների շրջանառելիության գործակից*	4.9	6.1	8.4
Պաշարների շրջապտույտի տևողությունն օրերով	74.2	59.5	43.5
Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից*	4.4	5.5	8.8
Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	83.5	66.3	41.4

* Ներկայացված ցուցանիշները տարեկանացված են

Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը ներկայացված են [Հավելված 3](#)-ում:

ԾԱՆՈՒՑՈՒՄ ՆԵՐԴՐՈՂԻՆ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԸ ՊԵՏՔ Է ԴԻՏՎԻ ՈՐՊԵՍ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄ ԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԴՐՈՂԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՊԵՏՔ Է ՀԻՄՆՎԱԾ ԼԻՆԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ՎՐԱ:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻ ԿԱԶՄՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁՆ ԱՄՓՈՓԱԹԵՐԹՈՒՄ ՊԱՐՈՒՆԱԿՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՈՉ

ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԱՊԱԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԱՍՈՎ) ԿՐՈՒՄ Է ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԵԹԵ ԱՅՆ ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԱՊԱԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ Է ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ՄՅՈՒՍ ՄԱՍԵՐԻ ՀԵՏ ԴԻՏԱՐԿԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ:

ՄԱՍ 2 ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Տեղաբաշխված պարտատոմսերը «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ի կողմից ցուցակվելու և առևտրին թույլատրվելու դեպքում Թողարկողը պարտավորվում է մասնագիտացված անձանց հետ կնքել երկրորդային շուկայում շուկա ստեղծողի պայմանագիր:

Թողարկողը պարտավորվում է մասնագիտացված անձանց հետ երկրորդային շուկայում շուկա ստեղծողի պայմանագրի կնքումից հետո ողջամիտ ժամկետում տեղեկացնել իր պարտատոմսերի սեփականատերերին և անվանատերերին նման պայմանագրի ուժի մեջ մտնելու վերաբերյալ:

2.6 Լրացուցիչ տեղեկատվություն

2.6.1 Խորհրդատուներ

Սույն Ազդագրի պատրաստման ընթացքում Թողարկողը չի օգտվել այլ խորհրդատուների ծառայություններից, բացի Տեղաբաշխողի կողմից մատուցվող տեղաբաշխման ծառայություններից:

2.6.2 Աուդիտորական եզրակացությունը

Բացի սույն Ծրագրային Ազդագրում ներկայացված Թողարկողի պատմական ֆինանսական հաշվետվություններից (2017-2018թթ. թվականների համար), որոնք ենթարկվել են աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից, սույն Ծրագրային Ազդագրում ներկայացված այլ տեղեկատվություն չի ենթարկվել աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից: Հաշվետվությունների և դրանց վերաբերյալ անկախ աուդիտորական կազմակերպությունների կողմից տրված եզրակացությունների պատճենները ներկայացված են [Հավելված 6-ում](#):

2.6.3 Թողարկողի վարկանիշը

2019թ.-ի սեպտեմբերին Թողարկողը ստացել է B2 (կայուն հեռանկար) վարկանիշ Մուդիզ վարկանիշային գործակալության կողմից:

ՄԱՍ 3 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

3.1 ՀԱՎԵԼՎԱԾ 6: Ֆինանսական հաշվետվություններ

«Չանգեզուրի պղծամուլիբդենային կոմբինատ» ՓԲԸ
 Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն
 2019թ. առաջին կիսամյակի համար

<u>Հազ. դրամ</u>	<u>Առ 30 Հունիս 2019թ.</u>	<u>Առ 31 Դեկտեմբեր 2018թ.</u>
Հասույթ	104,500,007	199,900,935
Հասույթ պղնձի խտանյութի փանառքից	69,102,032	137,620,262
Հասույթ ֆերոնիլիդենի փանառքից	35,329,352	60,090,531
Հասույթ մատուցված մակարացման ծառայությունից	-	2,086,000
Հասույթ այլ պրոստիտաների փանառքից	68,622	104,142
Վաճառքի ինքնարժեք	(56,134,102)	(103,087,295)
Պղնձի խտանյութի և ֆերոնիլիդենի փանառքի ինքնարժեք	(55,966,079)	(102,210,290)
Մատուցված ծառայությունների ինքնարժեք	-	(649,266)
Այլ վաճառքների ինքնարժեք	(168,023)	(227,739)
Համախառն շահույթ	48,365,905	96,813,640
Իրացման ծախսեր	(5,197,888)	(10,252,977)
Վարչական ծախսեր	(7,736,534)	(14,339,312)
Այլ եկամուտ	534,537	1,333,215
Այլ ծախսեր	(17,290,386)	(32,353,872)
	<i>որից:</i>	
	Ռոյալթիի գծով ծախս	(12,000,000)
	Այլ ծախսեր	(5,290,386)
Գործառնական շահույթ	18,675,634	41,200,694
Շահաբաժինների գծով եկամուտ	-	65,793
Տոկոսային եկամուտ	383,131	514,796
Տոկոսային ծախսեր	(4,011,531)	(12,063,339)
Ակնկալվող վարկային կորուստների գծով ծախս	-	(394,771)
Տեղանքի վերականգնման պահուստի գծով գեղջի ծախսագրում	-	(332,407)
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից	(715,422)	3,093,339
Չուտ եկամուտ փոխարժեքային տարբերություններից	1,544,665	88,079
Գործառնական գործունեությունից շահույթ	15,876,477	32,172,185
Նվիրատվություններ սոցիալական ծրագրերին	(3,049,576)	(7,900,100)
Շահույթ նախքան շահութահարկով հարկումը	12,826,901	24,272,085
Շահութահարկի գծով ծախս	(6,000,000)	(8,733,843)
Ընդամենը համապարփակ շահույթ	6,826,901	15,538,242

«Չանգեզուրի պղծամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ
 Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն
 2019թ. առաջին կիսամյակի համար

<u>Հազ.դրամ</u>	<u>Առ 30 Հունիս 2019թ.</u>	<u>Առ 31 Դեկտեմբեր 2018թ.</u>
Գործառնական գործունեություն		
Իրացումից ստացված գումարներ, ներառյալ ԱԱՀ-ն	85,791,534	218,298,208
Վճարումներ մատակարարներին, ներառյալ ԱԱՀ-ն	(66,092,240)	(124,965,235)
Վճարումներ աշխատակիցներին՝ եկամտային հարկից զուտ	(12,147,649)	(20,463,853)
Վճարումներ շահութահարկի գծով	(408,644)	(15,690,502)
Վճարումներ հարկերի գծով՝ բացառությամբ շահութահարկի	(42,547)	(5,240,781)
Վճարումներ ոռոյալթիի գծով	(11,644,537)	(12,970,001)
Նվիրատվություններ սոցիալական ծրագրերին	(3,468,201)	(5,433,720)
Վճարված տոկոսներ ոչ ընթացիկ կանխավճարների գծով	(302,279)	(2,434,340)
Բանկային ծառայությունների վճարներ և վնասներ փոխարկումից	(65,975)	(1,214,734)
Այլ ստացված գումարներ	82,949	1,859,844
Այլ վճարումներ	(597,705)	(3,156,122)
Զուտ դրամական միջոցների հոսքեր օգտագործված գործառնական գործունեությունում	(8,895,294)	28,588,764
Ներդրումային գործունեություն		
Հիմնական միջոցների և մակարագման գործունեության ակտիվի գծով ծախսումներ	(6,502,737)	(18,654,085)
Մուտքեր հիմնական միջոցների օտարումից	3,433,230	1,599
Տրված փոխառություններ	(8,118,010)	(797,326)
Ստացված տոկոսներ	21,161	48,985
Ստացված շահաբաժիններ Արցախի ՀԷԿ-ում բաժնետոմսերից	100,000	117,115
Զուտ դրամական միջոցների հոսքեր օգտագործված ներդրումային գործունեությունում	(11,066,356)	(19,283,712)
Ֆինանսական գործունեություն		
Մուտքեր վարկերից և փոխառություններից	59,718,846	212,025,762
Վարկերի և փոխառությունների մարում	(35,746,512)	(215,820,449)
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների մարումից ելքեր	(343,749)	(4,563,573)
Վճարված տոկոսներ	(2,477,999)	(5,523,837)
Վճարումներ ֆինանսական վարձակալության գծով	(756,763)	-
Զուտ դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից	20,393,823	(13,882,097)
Դրամական միջոցների և դրանց համարժեքերի զուտ աճ	432,173	(4,577,045)
Դրամական միջոցները և դրանց համարժեքերը հունվարի 1-ի դրությամբ	525,227	5,678,570
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների զուտ տարբերություններ	(282,716)	(576,298)
Դրամական միջոցները և դրանց համարժեքերը հաշվետու ժամանակաշրջանի վերջում	674,684	525,227